Հավելված 6
ՇՄԿԽՊ-ԳՀԱՊՁԲ 20/4 **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄԿԽՊ-ԳՀԱՊՁԲ 20/4-1

ք. Գյումրի «30» մարտի 2020թ.

<<ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ -ը ի դեմս Հովհաննես Վարձելյանի, որը գործում է ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Կենդանի լույս>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Արթուր Իվանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագիին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 306250 (երեք հարյուր վեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _12_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ	<<Կենդանի Լույս>> ՍՊԸ
ք. Գյումրի, Անի թաղամաս, փ. 5, շ.8	Ք.Գյումրի, Շիրակացի 5/4
Հայէկոնոմ բանկ	ՀՎՀՀ 05534453
h/h 163128117526	Ինեկո Բանկի Գյումրիի մասնաճյուղ
ՀՎՀՀ 05503178	h/h 2050122054441001
Տնօրեն՝ Հ. Վարձելյան	Տնօրեն՝ Ա.Իվանյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 30 » մարտի 2020թ. կնքված
ՇՄԿԽՊ-ԳՀԱՊՁԲ 20/4-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33621330	նիկեթամիդ 0,25գր, 1մլ R07AB02	Դարնիցա, Ուկրաինա	Լուծույթ ներարկման, 0.25գր, 1մլ	սրվակ	145	1450	10	*ք. Գյումրի, Անի թաղամաս, փ. 5, շ.8*	10	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝
2	33621290	էպինեֆրին (ադրենալին) 0,1%, 1մլ a01ad01	Զդորովյա, Ուկրաինա	Լուծույթ ներարկման, 1մգ/մլ	սրվակ	160	1600	10		10	
3	33661159	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) 1%, 1մլ C01CA06	ԳՆՅԼՍ, Ուկրաինա	Լուծույթ ներարկման, 1%, 1մլ	սրվակ	100	1000	10		10	
4	33621730	վերապամիլ 2,5մգ, 2մլ c08da01	Ալկոլոիդ, մակեդոնիա	Լուծույթ ներարկման, 2,5մգ, 2մլ	սրվակ	500	5000	10		10	
5	33691129	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ (ռինգերի լուծույթ) 250մլ	Ֆարմատեք, ՀՀ	Լուծույթ կաթիլաներարկման	հատ	370	3700	10		10	
6	33621590	ֆուրոսեմիդ 2%, 2մլ c03ca01	Բորիսով, Բելառուսիա	Ֆուրոսեմիդ furosemide, լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 2մլ ամպուլա	սրվակ	35	350	10		10	
7	33621340	կոֆեին նատրիումի բենզոատ 0,1գր, 1մլ N06BC01	ԵրՔՖԳ, Հայաստան	Լուծույթ ներարկման, 0,1գր, 1մլ	սրվակ	40	400	10		10	
8	33691144	նատրիումի թիոսուլֆատ 30%, 5մլ v03ab06	ԵրՔՖԳ, Հայաստան	Լուծույթ ներարկման, 30%, 5մլ	սրվակ	65	650	10		10	

10	33691136	նատրիումի քլորիդ 0,9%, 250մլ a12ca01	Ֆարմատեք, ՀՀ	Լուծույթ կաթիլաներարկման	հատ	350	3500	10		10	յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում:
11	33691138	գլյուկոզ 5%, 500մլ b05cx01	Ֆարմատեք, ՀՀ	Լուծույթ կաթիլաներարկման	հատ	340	3400	10		10	
13	33631282	Վիշնևսկու լինիմենտ 40գ D08AX	Բորիսով, Բելառուսիա	Վիշնևսկու Լինիմենտ, տեղային անտիսեպտիկ, 40գ	տուփ	375	7500	20		20	
16	33661154	Տետրացիկլին 1% 3գ աչքի քս. S01AA09	Արփիմեդ, ՀՀ	Քսուք աչքի, տետրացիկլին 1%, անտիբիոտիկ տեղային	տուփ	690	6900	10		10	
18	33621590	Ֆուրոսեմիդ 1% 2մլ C03CA01	Բորիսով, Բելառուսիա	Լուծույթ ներարկման, ֆուրոսեմիդ 1%, միզամուղ, 2մլ ամպուլա	ամպ	35	3500	100		100	
21	33631284	Դիֆենհիդրամին 1% 1մլ N10 D04AA32 (դիմեդրոլ կամ համարժեք)	ԵրՔՖԳ, Հայաստան	Լուծույթ ներարկման, դիմեդրոլ 1%, հակահիստամինային, քնաբեր	սրվակ	27	810	30		30	
22	33611170	Դրոտավերին լ-թ 2% A03AD02	Բորիսով, Բելառուսիա	Լուծույթ ներարկման, դրոտավերին 2%, հակաջղակծկումային	ամպ	65	650	10		10	
23	33661117	Կատվախոտի էքս. N05CM09	Բորիսով, Բելառուսիա	Հաբ, կատվախոտ	ֆլ	110	3300	30		30	
24	33671114	Ամինոֆիլլինի լ-թ 2.4% 5մլ N10 R03DA05	ԵրՔՖԳ, Հայաստան	Լուծույթ ներարկման, ամինոֆիլլին 2,4%, բրոնխոլայնիչ	սրվակ	45	2250	50		50	
25	33611170	Դրոտավերին 40մգ A03AD02	Բորիսով, Բելառուսիա	Դրոտավերին 40մգ, դեղահատ A03AD02	հաբ	12	1800	150		150	
26	33691134	Կալցիումի քլորիդ 10% 10մլ, A12AA03	Դարնիցա, Ուկրաինա	Լուծույթ ներարկման, կալցիումի քլորիդ 10%, 10մլ	սրվակ	100	4000	40		40	
27	33621280	ֆենոբարբիտալ 1,826գ, էթիլ սպիրտ 79մլ (Կորվալոլ կամ համարժեք) N05CM	Ֆարմստանդարտ, Ռուսաստան	Կաթիլներ, ներքին ընդունման,α-բրոմիզովալերիանաթթվի էթիլեթեր 2գ, ֆենոբարբիտալ 1,826գ, էթիլ սպիրտ 79մլ	ֆլ.	175	3500	20		20	
28	33631282	Քլորամֆենիկոլի լինիմենտ 10% 25գր D06AX02 (Սինտոմիցին կամ համարժեք)	Էսկո, Հայաստան	էմուլսիա, քլորամֆենիկոլի լինիմենտ 10%, անտիբիոտիկ	տուփ	424	6360	15		15	
30	33651134	Ցիպրոֆլոքսացին 0.3% 10 մլ աչքի կաթիլներ S01AX13	Ռոմֆարմ, Ռումինիա	Ակնակաթիլներ, ցիպրոֆլոքսացին 0,3%, անտիբիոտիկ	ֆլ	470	7050	15		15	
31	33621540	Պապավերին լ-թ 2% 2մլ A03AD01	Բորիսով, Բելառուսիա	Լուծույթ ներարկման, պապավերինի հիդրոքլորիդ, միոտրոպ պազմոլիտիկ	սրվակ	38	19000	500		500	
32	33631460	Վուլնուզանի քսուկ 45գ D03AX	Սոռարմա, Բուլղարիա	Քսուք, արտաքին օգտ., հակամիկրոբային, հակաբորբոքային և ռեգեներացնող	տուփ	1110	27750	25		25	
33	33661116	Լիդոկային լ-թ 2% 2մլ N01BB02	ԵրՔՖԳ, Հայաստան	Լուծույթ ներարկման, լիդոկային 2%, անէսթետիկ	սրվակ	30	3000	100		100	

34	33661147	Նեոստիգմին մեթիլ սուլֆատ 0.5% 1մլ N07AA01 (Պրոզերին կամ համարժեք)	Դարնիցա, Ուկրաինա	Լուծույթ ներարկման, նեոստիգմին մեթիլսուլֆատ, խոլինէսթերազայի ինհիբիտոր	սրվակ	50	1000	20		20	
35	33621640	Հիդրոկորդիզոնի քսուք 1% 10գ D07AA02	Արփիմեդ, ՀՀ	Քսուք, հիդրոկորտիզոն 1% հակաբորբոքային	տուփ	360	3600	10		10	
36	33621440	Բենդազոլ 1% 1մլ C04AX (դիբազոլ կամ համարժեք)	ԵրՔՖԳ, Հայաստան	Լուծույթ ներարկման, բենդազոլ 1%, վազոդիլատատոր	սրվակ	30	30000	1000		1000	
37	33631282	Քլորամֆենիկոլ 300մգ+մեթիլուրացիլ 1600մգ (Լևոմիկոլ կամ համարժեքը) քսուք 40գ D06C	Բորիսով, Բելառուսիա	Քսուք,քլորամֆենիկոլ+մեթիլուրացիլ, արտաքին օգտագործման, տեղային անտիսեպտիկ	տուփ	290	3480	12		12	
38	33631282	Ֆուրացիլինի քսուկ 0.2% 25 գ	Էսկո, Հայաստան	Ֆուրացիլինի քսուկ 0.2% 25 գ, նիտրոֆուրալ	տուփ	250	1250	5		5	
40	33631260	Յոդի լուծույթ 5% H03CA	Էսկո, Հայաստան	Լուծույթ արտ. օգտագործման, Յոդի ոգեթուրմ 5% - 30 մլ, տեղային անտիսեպտիկ	սրվակ	280	8400	30		30	
41	33621270	Իզովալերիանաթթվի մեթիլ եթեր	Ֆարմստանդ արտ, Ռուսաստան	Հաբ, իզովալերիանաթթու + մենթոլ, անոթլայնիչ	հաբ	12	600	50		50	
42	33661154	Անէսթեզինի քսուք 30գ	ՌԱԲ, Հայաստան	Քսուք, բենզոկային, տեղային ցավազրկող	տուփ	700	3500	5		5	
43	33691236	Քլորոպիրամինի լ-թ 20մգ/1մլ R06AC03	Էգիս, Հունգարիա	Լուծույթ ներարկման, քլորոպիրամին, հակահիստամինային	ամպ	450	1350	3		3	
44	33631270	Ադամանդյա կանաչ 2% 15գր	Էսկո, Հայաստան	Լուծույթ, ադամանդյա կանաչ 2%	ֆլ.	220	11000	50		50	
45	33691151	Ցիկլոպենտոլատ ակնակաթիլներ 1% S01FA04	Լիքվոր, Հայաստան	Ակնակաթիլներ, Ցիկլոպենտոլատ, Մ Խոլինոմիմետիկ, միդրիատիկ	տուփ	3250	6500	2		2	
46	33661116	Նովոկայինի լուծույթ 2%	ԵրՔՖԳ, Հայաստան	Նովոկայինի լուծույթ 2%	ամպ	28	11200	400		400	
47	33691136	նատրիումի քլորիդ 0.9%, 5 մլ	ԵրՔՖԳ, Հայաստան	նատրիումի քլորիդ 5 մլ	ամպ	45	2250	50		50	
48	33661153	Դեքսամետազոն 0,1% աչքի կաթիլներ	Ռոմֆարմ, Ռումինիա	Դեքսամետազոն 0,1% աչքի կաթիլներ	հատ	625	7500	12		12	
49	33661154	Տետրակային 1%, 10 մլ	Լիքվոր, Հայաստան	Տետրակային 1% աչքի, 10 մլ	հատ	3000	15000	5		5	
50	33631282	Ֆուրացիլինի փոշի	Ռուսաստան	Ֆուրացիլինի փոշի	գր	42	12600	300		300	
51	33661159	ֆենիլէֆրին (միդրատիկ 2.5%)	Լիքվոր, Հայաստան	ֆենիլէֆրին (միդրատիկ 2.5%) աչքի կաթիլներ	հատ	3200	9600	3		3	
52	33661122	Պարացետամոլ 0.5	Տրոժ, Գերմանիա	Պարացետամոլ 0.5	հատ	8	4800	*600*		*600*	

53	33631290	Իբուպրոֆեն 0.2	Բորիսով, Բելառուսիա	Իբուպրոֆեն 0.2	հատ	8	4800	600		600	
55	33141112	Սպեղանի կպչուն 3/250	Լեյկո, Հայաստան	Սպեղանի կպչուն 3/250 , կտորե հիմքով	հատ	400	8000	20		20	
56	38431710	Ապակե կաթոցիկ 2մլ/0.25մլ	Ռուսաստան	Ապակե կաթոցիկ 2մլ/0.25մլ	հատ	1500	3000	2		2	
57	38431730	Լաբորատոր շտատիվ (40 տեղանոց)	Ռուսաստան	Լաբորատոր փորձանոթները տեղադրելու համար (պլաստմասե)	հատ	3000	15000	5		5	
58	33191310	Աէրոմետր	Ռուսաստան	Մեզի տեսակարար կշիռը չափելու համար (1.010-1.030)	հատ	12000	12000	1		1	
60	33211170	Միզաթթու UricAcid /Միզաթթվի որոշման հավաքածու	Ֆենոքս, Բելոռուսիա	Միզաթթվի որոշման համար նախատեսված հավաքածու Uric Acid: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ, պլազմա: ****	մլ	190	11400	60		60	

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

ԳՆՈՐԴ

<<ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ
ք. Գյումրի, Ամի թաղամաս, փ. 5, շ.8
Հայէկոնոմ բանկ
հ/հ 163128117526
ՀՎՀՀ 05503178
Տնօրեն՝ Հ. Վարձելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Կենդանի Լույս>> ՍՊԸ
Ք.Գյումրի, Շիրակացի 5/4
ՀՎՀՀ 05534453
Ինեկո Բանկի Գյումրիի մասնաճյուղ
հ/հ 2050122054441001
Տնօրեն՝ Ա.Իվանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 30 » մարտի 2020թ. կնքված
ՇՄԿԽՊ-ԳՀԱՊՁԲ 20/4-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի			
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**
Վճարման ժամկետը/վճարման ժամանակացույց		Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** Իրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

<<ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՆՎԱՆ
ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ
ք. Գյումրի, Անի թաղամաս, փ. 5, շ.8
Հայէկոնոմ բանկ
հ/հ 163128117526
ՀՎՀՀ 05503178
Տնօրեն՝ Հ. Վարձելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Կենդանի Լույս>> ՍՊԸ
Ք.Գյումրի, Շիրակացի 5/4
ՀՎՀՀ 05534453
Ինեկո Բանկի Գյումրիի մասնաճյուղ
հ/հ 2050122054441001
Տնօրեն՝ Ա.Իվանյան

/ստորագրություն/
Կ.Տ